# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 4-Ա
24 հունվարի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 85-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետի, 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի հունվարի 16-ի թիվ 01/27/799-20 հաձնարարականը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն հավելված N 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի վարձատրության չափը, Անի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված N 2-ի:
3. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի վարձատրության չափը, Անի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 74-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 85-Ա որոշումը:
4. Սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկությամբ՝ համաձայն հավելված N 3-ի:
5. Համայնքային ծառայության պաշտոնների մասով սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից, իսկ մնացած մասով՝ 2020 թվականի հունվարի 29-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ ...10 | Դեմ՝ ...0 | Ձեռնպահ՝ ...0 |
|---|---|---|---|
| ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՆԱԻՐԻ | | | |
| ԱՐՍԵՆՅԱՆ ԱՐՄԵՆ | | | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | | |
| ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱՄՍԱՐ | | | |
| ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ | | | |
| ՂԶՐՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ | | | |
| ՄԵԼԻՔՅԱՆ ԲԱԲԻԿ | | | |
| ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ | | | |
| ՆԻԿՈՅԱՆ ԱՐՄԵՆ | | | |
| ՇԱԲՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ | | | |
| ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | | |
| ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ | | | |
| ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱԳՈՒՆ | | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| ՎԱՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թվականի հունվարի 24
Քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 4-Ա ՈՐՈՇՄԱՆ

# ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

1. Աշխատակազմ.

2. Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում.

| |
|---|
| Ա) Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման և գնումների բաժին |

3. Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում.

| |
|---|
| 1) Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Անիի տարածքային բաժին |

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ղեկավար Ա. Գևորգյան

ՀԱՎԵԼՎԱԾ N2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24 -Ի
ԹԻՎ 4-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| | |
|---|---|
| 1 | Աշխատողների քանակը՝ 75 |

2 Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքների քանակը | Հաստիքային միավորը | Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը (հազ. դրամ) | Ընդամենը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| | 1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 1 | 430.0 | 430.0 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 2 | 1 | 260.0 | 520.0 |
| | Ընդամենը՝ | 3 | | | 950.0 |
| | 2. ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | |
| 1 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 1 | 200.0 | 200.0 |
| 2 | Համայնքի ղեկավարի օգնական | 2 | 1 | 170.0 | 340.0 |
| | Ընդամենը՝ | 3 | | | 540.0 |
| | 3. ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | |
| 1 | Վարչական ղեկավար (մինչև 600 բնակիչ ունեցող Անիպեմզա, Անիավան, Աղին, Հայկաձոր բնակավայրերում) | 4 | 1 | 210.0 | 840,0 |
| 2 | Վարչական ղեկավար (601-1000 բնակիչ ունեցող Գուսանագյուղ, Շիրակավան, Բագրավան, Ջրափի, Լուսաղբյուր, Լանջիկ, Սարակապ բնակավայրերում) | 7 | 1 | 230.0 | 1610.0 |
| 3 | Վարչական ղեկավար (1001-1500 բնակիչ ունեցող Իսահակյան, Ձորակապ, Ձիթհանքով, Քարաբերդ բնակավայրերում) | 4 | 1 | 250.0 | 1000.0 |
| 4 | Վարչական ղեկավար (1500 և ավելի բնակիչ ունեցող Սառնաղբյուր բնակավայրում) | 1 | 1 | 270.0 | 270.0 |
| | Ընդամենը՝ | 16 | | | 3720,0 |
| | 4. ՀԱՄԱՅՆՔԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | |
| | *Աշխատակազմ* | | | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 1 | 320.0 | 320.0 |
| | Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ | | | | |
| 2 | Գլխավոր մասնագետ | 4 | 1 | 200.0 | 800.0 |
| 3 | Առաջատար մասնագետ | 5 | 1 | 170.0 | 850.0 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ | 3 | 1 | 150.0 | 450.0 |
| 5 | Երկրորդ կարգի մասնագետ | 20 | 1 | 135.0 | 2700.0 |
| | | | | | |
| | Կառուցվածքային ստորաբաժանում | | | | |
| | Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման և գնումների բաժին | | | | |
| 6 | Բաժնի պետ | 1 | 1 | 260.0 | 260.0 |
| 7 | Բաժնի առաջատար մասնագետ | 2 | 1 | 170.0 | 340.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8 | Բաժնի առաջին կարգի մասնագետ | 4 | 1 | 150.0 | 600.0 |
| 9 | Բաժնի երկրորդ կարգի մասնագետ | 1 | 1 | 135.0 | 135.0 |
| | Առանձնացված ստորաբաժանում | | | | |
| | Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Անիի տարածքային բաժին | | | | |
| 10 | Բաժնի պետ | 1 | 1 | 256.623 | 256.623 |
| 11 | Բաժնի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 133.602 | 133.602 |
| | Ընդամենը | 2 | | | 390.225 |
| | Ընդամենը՝ | | | | |
| | 5. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | | |
| 1 | գործավար | 1 | 1 | 130.0 | 130.0 |
| 2 | էլեկտրիկ | 1 | 1 | 170.0 | 170.0 |
| 3 | տնտեսվար | 1 | 1 | 150.0 | 150.0 |
| 4 | վարորդ/ծառայողական ավտոմեքենայի/ | 1 | 1 | 130,0 | 130,0 |
| 5 | վարորդ/ծառայողական ավտոմեքենայի/ | 1 | 1 | 150.0 | 150.0 |
| 6 | հավաքարար/վարչական շենքի/ | 1 | 1 | 110.0 | 110.0 |
| 7 | ցերեկային պահակ-բակապահ | 1 | 1 | 110.0 | 110.0 |
| 8 | ակումբավար | 3 | 1 | 100.0 | 300.0 |
| | Ընդամենը՝ | 10 | | | 1250,0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 75 | | | 13305.0 |

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 4-Ա ՈՐՈՇՄԱՆ

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| Հ/հ | Կրճատման ենթակա համայնքային ծառայության պաշտոնների անվանումները (ծածկագրերը) | Կրճատման ենթակա համայնքային ծառայության պաշտոնների քանակը | Նոր ստեղծվող բաժնի անվանումը | Նոր ստեղծվող համայնքային ծառայության պաշտոնների անվանումները | Նոր ստեղծվող համայնքային ծառայության պաշտոնների քանակը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ(2.1-1) | 11 | **Ֆինանսատնտեսա-գիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման և գնումների բաժին** | բաժնի պետ | 8 |
| 2. | Աշխատակազմի գլխավոր մասնագետ-հաշվապահ (2.3-1) | | | | |
| 3. | Աշխատակազմի առաջատար մասնագետ (3.1-3) | | | բաժնի առաջատար մասնագետ | |
| 4. | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ-աուդիտոր (3.2-2) | | | բաժնի առաջատար մասնագետ | |
| 5. | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (3.2-3) | | | բաժնի առաջին կարգի մասնագետ | |
| 6. | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (3.2-4) | | | բաժնի առաջին կարգի մասնագետ | |
| 7. | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (3.2-5) | | | բաժնի առաջին կարգի մասնագետ | |
| 8. | Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (3.3-1) | | | բաժնի առաջին կարգի մասնագետ | |
| 9. | Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (3.3-3) | | | բաժնի երկրորդ կարգի մասնագետ | |
| 10. | Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (3.3-7) | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 11. | Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (3.3-4) | | **աշխատակազմի առաջին կարգի մասնագետ** | **1** |

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

## ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 85-Ա որոշմամբ ՀՀ Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմում կառուցվածքային փոփոխություններ և լրացումներ կատարելը պայմանավորված է նոր կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու անհրաժեշտությամբ, որն իր մեջ ընդգրկելու է համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, հաշվապահական հաշվառման, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ինչպես նաև գնումների հետ կապված գործառույթները:

Անի խոշորացված համայնքի 17 բնակավայրերում բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման գործընթացները համակարգելու և վերահսկելու, ինչպես նաև համայնքային ենթակայության 6 բյուջետային հիմնարկների և 3 համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական աշխատանքները հսկելու, համայնքապետարանի կարիքների համար անհրաժեշտ գնումների գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար նպատակահարմար է «Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման և գնումների բաժին» ստեղծելը:

Բաժինն ունենալու է 8 համայնքային ծառայության պաշտոն, որից՝

բաժնի պետը հսկելու և համակարգելու բաժնի գործառույթները,

1 առաջատար մասնագետը մասնակցելու է հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերի պատրաստման, դրանցում առկա տեղեկատվությունը հաշվապահական գրանցամատյաններում հաշվառելու աշխատանքներին, իրականացնելու է ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունների ժամանակին կազմման և ներկայացման աշխատանքները,

1 առաջատար մասնագետն իրականացնելու է հաշվապահական հաշվառման և եկամուտների հավաքագրման աշխատանքներ,

3 առաջին կարգի մասնագետները զբաղվելու են գույքահարկի, հողի հարկի գանձումներով և բազաների վարման աշխատանքներով,

1 առաջին կարգի և 1 երկրորդ կարգի մասնագետները մասնակցելու են գնումների հետ կապված աշխատանքներին:

Ներկայումս Անիի համայնքապետարանի աշխատակազմում առկա է երկրորդ կարգի մասնագետի պաշտոն /ծածկագիր 3.3-4/, որի պաշտոնի անձնագրով նախատեսված են անասնաբույժի գործառույթներ, սակայն նշված պաշտոնը մինչ օրս չի համալրվել, քանի որ համայնքում անասնաբուժական ծառայությունները մատուցվել են պայմանագրային հիմունքներով, մի քանի անձանց կողմից, ուստի նպատակահարմար է կրճատել 1 երկրորդ կարգի մասնագետի պաշտոնը և աշխատակազմում ավելացնել 1 առաջին կարգի մասնագետի պաշտոն, որի ավելացումը պայմանավորված է համայնքապետարանում իրականացվող փաստաթղթաշրջանառության, աշխատակազմի կադրային գործի վարման և համայնքի ավագանու նիստերի նախապատրաստման աշխատանքների ծանրաբեռնվածությամբ, որոնք ներկայումս իրականացվում են միայն աշխատակազմի քարտուղարի կողմից:

Փոփոխությունների կատարման համար հիմք է հանդիսացել ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 02//6.4/46533-2019 հանձնարարականը՝ համաձայն որի առաջարկվում է 2020 թվականի կարիքների համար ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման գործընթացն իրականացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և նախաձեռնել համապատասխան ստորաբաժանման գործունեության դադարեցման գործընթաց:

Հիմք ընդունելով նշված առաջարկությունը՝ Անի համայնքում 2020 թվականից ներքին աուդիտի ծառայությունների գնման գործընթացը կազմակերպվելու է «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան, հետևաբար աշխատակազմի «Ներքին աուդիտի» բաժնը հանվում է աշխատակազմի կառուցվածքից /ներքին աուդիտի բաժնի պետ և բաժնի առաջին կարգի մասնագետ-աուդիտոր :/

Արդյունքում ընդամենը աշխատակազմում կրճատվում են համայնքային ծառայության 11 պաշտոններ, փոխարենը ստեղծվում են 9 պաշտոններ:

Նոր հաստատված հաստիքացուցակով համայնքային ծառայության պաշտոնների թիվը փոփոխվել է՝ նախկին 45-ի փոխարեն հաստատվել են 43-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ